նին յիշատակն 'ի Սիօն ։ Նմանապէս Ամեն. Սրբազան Հօր Գահիրէ և Աղեքսանդրիոյ՝ գտնուելուն զանազան անձինք մասնաւոր նուէրներ ըրած են Թէ Թանգարանիս և Թէ Դպրոցաց՝ որոնց անուանքը Ս. Սիոնիս Տէրօջը տումարին մէջ արձանագրուած են ։

— Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր հետ եկան Գահիրէէն Ժառանգաւորաց ուսումնարանի երկու սեւամորթ աշակերտացուք ։ Որոց առաջինը Գաբրիէլ անուն՝ որդեգիր Արաբկերցի Կարապետեան Մեծ. Պօղոս Էֆէնտիին, և երկրորդը Միքայէլ անուն Արաբկերցի Յարութեան Արժանայարգ Գըրիգոր աղայի որդեգիրն, որոնք ըստ կանոնի ուսումնարանիս վանուցս բըժըշկին կողմանէ նայուելով ժառանգաւորաց դպրոցը մտան ։

Բժշկի վկայագրոյն օրինակը.

Արժանապատիւ Տեսուչ դպրոցաց։

Ըստ Բարձր հրամանի Ամեն. Սրբազան Հօր և կանոնի Սրբոյ Աթոռոյ Ժառանգաւորաց դպրոցի աշակերտացու Գաբրիէլ և Միքայէլ տըղայքը նայելով ըստ բժշկական օրինաց՝ ամենեւին տրատ մի չունին, և կազմուածքնին առողջ և ժառանգական ախտ մի չունենալնուն կը վկայեմ։

Նուաստ Սահակ Քիթապճեան
բժիշկ Ս. Աթոռոյ
Երուսաղէմի ։

1868 Յունվար 10
Երուսաղէմ ։

Անցեալ և ներկայ ամսոյս մէջ բաւական ալէկոծութիւններ եղան Արաբեստանի ծովեզերքը. այլ ուրախութեամբ սրտի կը ծանուցանեմք Թէ ջերմեռանդն ուխտաւորաց փոքրիկ վնաս մը անգամ պատահած չէ ։ Այս 'ի միամտութիւն ընտանեաց և ազգականաց բարեպաշտ ուխտաւորաց կը ծանուցանեմք ։

Ժառանգաւորաց ուսումնարանիս տարեկան հարցաքննութիւնը սկսաւ ամսոյս 23 ին, յաջորդ Թուով արդիւնքը կը հրատարակեմք ։

## ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Քաջ զգալով Ճաշու աւետարանի սուրբ Եկեղեցւոյ մէջ ամենապիտանաւորութիւնը, ուստի այս անգամ մաքուր տպագրութեամբ և ընտիր Թըղթով 'ի լոյս ընծայելու մամլոյ յանձնըւեցաւ ։

Սուրբ Աթոռոյս տպարանին 'ի լոյս ընծայուած գրքերը առ այժմ հետեւեալ տեղերը կը վաճառուին Ֆրանկի հաշուով անփոփոխ ։

Բերիա (Հալէպ) Արժ. Տ. Խաչատուր Քահանայի գրասենեակը ։

Գահիրէ Օմիւռնացի Լազարով մեծապատիւ Աղայ Սիմէօնի վաճառատունը ։

Օմիւռնիա Մեծ. Տէտէեան եղբարց գրատունը ։

Կ. Պօլիս. Մեծ. Մարգարեան և այլ գրավաճառաց ձեռօք ։

Տիգրանակերտ Նախաշեան Մեծ. Յովհաննէս աղայի վաճառատունը։

Հանդիսիս բաժանորդ գրուիլ փափաքողները կրնան վերոգրեալ անձանց միջոցաւ՝ կամ ուղղակի Սուրբ Երուսաղէմ գրելով իրենց փափաքը ցուցնել ։